

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՃ



### Նոր ներդրումներ Կոտայքի գյուղատնտեսությունում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն աշխատանքային այցով եղել է Կոտայքի մարզում, որտեղ Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանի և Հրազդանի քաղաքապետ Արամ Դանիելյանի ուղեկցությամբ, այցելել է Հրազդան քաղաքում կառուցվող լույսի արտադրության ջերմոցային համալիր:

Նախարարը շրջել է համալիրում, ծանոթացել շինարարական աշխատանքների ընթացքին: «Գրին Ֆարմեր» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Հունանյանը տեղեկացրել է, որ մինչև տարեվերջ նախատեսվում է ավարտել ջերմոցային համալիրի շինարարությունը, որի համար ներդրվելու է 5.5 մլրդ դրամ: 11 հա տարածք ունեցող ջերմոցային տնտեսությունում տարեկան նախատեսվում է արտադրել 5000-6000 տոննա լույսի, որի մեծ մասը կիրացվի տեղական շուկայում: Արտահանման շուրջ ևս արդեն բնակեցություններ են վարվում Ռուսաստանի Դաշնության և արաբական երկրների հետ: Այստեղ նախատեսվում են հաջորդ երկու տարիների ընթացքում կառուցել ևս 20 հա լույսի արտադրության ջերմոցային համալիր, որը կապահովի 200 մշտական աշխատատեղ տեղի բնակչության համար:

Այնուհետև նախարարն ուղևորվել է գյուղմթերքի արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող «Վիլֆուդ» ՍՊԸ: Ընկերության հիմնադիր-տնօրեն Արմեն Առաքելյանը տեղեկացրել է, որ ընկերության արտադրանքի մոտ 35 տոկոսն իրացվում է տեղական շուկայում, իսկ մնացած մասն արտահանվում է հիմնականում Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ և Ֆրանսիա: Օգոստոս ամսին նախատեսվում է վերաբացել նոր արտադրամաս, որը թույլ կտա կրկնապատկել արտադրանքի ծավալները: Բացի այդ, ընկերությունում 2008 թվականին ներդրվել է գերմանական նոր հոսքագիծ, որի շնորհիվ հնարավոր է դարձել կազմակերպել եվրոպական ստանդարտներին համապատասխանող կափարիչների արտադրություն:

Այցի ավարտին, ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ուղևորվել է Նոր Գեղի համայնքում նորակառույց «Զեյ Էմ Ջի» ելակի ջերմոցային տնտեսություն: Ընկերության տնօրեն Դմիտրի Ալեքսեյենկոն նշել է, որ 3 հա-ի վրա սկսել են զբաղվել ելակի արտադրությամբ, աճեցնում են «Ալպին» տեսակի ելակ: Օգոստոսին նախատեսվում են բերք ունենալ, որը կիրացնեն տեղական շուկայում, ինչպես նաև կարտահանեն ՌԴ: «Մարզում կառուցվող նոր ջերմատներում ամբողջությամբ նոր ներդրումներ են և արտահանման մեծ ներուժ ունեն: Եղել ենք նաև «Վիլֆուդ» գործարանում, որը բարձրակարգ պահածոյացված արտադրանք է թողարկում և շարունակում է ներդրումներ կատարել՝ ընդլայնելու արտադրությունը: Սրանք այն լավ օրինակներն են, որոնք դրական ազդակ կլինեն մյուս ներդրողների համար այն առումով, որ հայկական արտադրանքը մրցակցային կարող է լինել Ռուսաստանի և արտերկրի շուկաների համար», - ամփոփելով այցի արդյունքները՝ նշել է Իգնատի Առաքելյանը:

Նախարարի խոսքով՝ ջերմոցաշինությունը Հայաստանում զարգացման նոր թափ է ստանում, քանի որ այստեղ ռիսկերը նվազագույնի են հասցված, այն ապահովագրված է բնակլիմայական աղետներից, ավտոմատացված համակարգեր են ներդրված, որտեղ մարդկային գործունը շատ փոքր է:

Անդրադառնալով կառավարության ծրագրի գյուղատնտեսության հատվածին՝ նախարարը նշել է, որ նախատեսվում է մատչելի ֆինանսական միջոցներ տրամադրել գյուղացիական տնտեսություններին՝ կաթիլային ոռոգման համակարգերի, կարկտապաշտպան ցանցների, ինտենսիվ այգիների համար:

Բացի այդ, 2018 թվականից կիրականացվի ապահովագրական համակարգի փորձնական ծրագիրը, որպեսզի շատ արագ այն ներդրվի հանրապետության բոլոր թիրախային գոտիներում՝ կարկտահարության և բնական այլ աղետների վնասները փոխհատուցելու նպատակով, ինչն այսօր արդիական խնդիր է գյուղատնտեսության զարգացման ճանապարհին:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարության ղեկավարը նիստի ընթացքում անդրադարձել է 2017 թ. հունիսի 12-ին հանրապետության տարածքում տեղացած կարկուտի հետևանքների վերացման հարցին. «Կարկտահարությունից առավելապես տուժել են Արմավիրի մարզի մի շարք համայնքների գյուղատնտեսությունները: Հանձնարարում եմ ՀՀ գյուղատնտեսության, տարածքային կառավարման և զարգացման նախարարներին և Արմավիրի մարզպետին՝ եռօրյա ժամկետում, ուսումնասիրել և ամփոփել կարկուտի հետևանքով պատճառված վնասները և կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան առաջարկություն և տեղեկանք»:

Գործադիրը որոշումներ է ընդունել ՀՀ 2017 թ. պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի հաշվին ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել է 144,031.10 հազ. ՀՀ դրամ, որից առաջին կիսամյակում՝ 10,031.1 հազ. ՀՀ դրամը, 9 ամսում՝ 94,031.1 հազ. ՀՀ դրամը՝ որպես ՀՀ խաղողագործության և գինեգործության հիմնադրամին աջակցություն:

\*\*\*

Վարչապետ Կարեն Կարապետյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի ուղեկցությամբ, այցելել է «Դալմա Մոլ» համալիրի հարևանությամբ գտնվող տարածք, որտեղ նախատեսվում է իրականացնել «Հայկական Գյուղ» ազգագրական թաղամասի կառուցապատման ներդրումային ծրագիրը:

Կառավարության ղեկավարին ներկայացվել են ծրագրի մանրամասները, որով նախատեսվում է ստեղծել Հայաստանի տարբեր տարածաշրջանների քաղաքային և գյուղական բնակավայրերի ազգային ավանդույթներին ու պատմականորեն ձևավորված ճարտարապետական դիմագծին բնորոշ ազգագրական թաղամաս՝ բնակելի տներով, հյուրանոցներով, ինչպես նաև նկարչությունն ու ազգային արհեստները (գորգագործություն, դարբնագործություն, կավագործություն, հուշանվերների պատրաստում) ներկայացնող ցուցասրահներով:

Ծրագրին նախորդել են ՀՀ ԿԼ քաղաքաշինության պետական կոմիտեի ու ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մասնագետների կողմից կատարված ուսումնասիրությունները՝ Հայաստանի տարբեր բնակավայրերին բնորոշ «Հայկական տան» տիպերի վերաբերյալ: Ազգագրական թաղամասի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները սկսված են: Ներկայումս կառուցապատման ներդրումային ֆոնդը գտնվում է ձևավորման փուլում, որին մասնակցելու պատրաստակամություն են հայտնել հողամասերի սեփականատերերը և Երևանի քաղաքապետարանը:

Վարչապետը հանձնարարել է պատասխանատուներին՝ հնարավորինս կարճ ժամանակահատվածում ներկայացնել ծրագրի վերջնական տարբերակը՝ այն ներդրողների հետ քննարկելու նպատակով: Կառավարության ղեկավարը նշել է, որ «Հայկական Գյուղ»-ը կարող է դառնալ Երևանի զբոսաշրջային գրավչություններից մեկը՝ նպաստելով մշակութային զբոսաշրջության հետագա զարգացմանը:

Մասնավորապես, նախատեսվում է այստեղ ստեղծել մի միջավայր, որը կունենա նաև մատուցման նորարարական մոտեցումներ:

Որոշ հատվածներում, չկորցնելով հնագիտական պատկերը, շինությունները լրացվելու, վերականգնվելու են որոշակի ճարտարապետական լուծումներով, ընդ որում՝ մեծ մասը շարժական հնարքներով: Կ. Կարապետյանը կարևորել է ծրագրի իրականացումը և առաջարկել այն կյանքի կոչել՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ:

|                     |      |
|---------------------|------|
| Արտադրություն       | Էջ 4 |
| Կոոպերացիա          | Էջ 5 |
| Մասնագետի խորհուրդը | Էջ 7 |



## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

### Նոր սորտեր և բարձր բերքատվություն

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն աշխատանքային այցով մեկնել է Արմավիրի մարզ, որտեղ եղել է ՀՀ ԳՆ «Երկրագործության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում:



Այցելության սկզբում նախարարը շրջել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) աջակցությամբ, «Ծիրանի գենետիկական ռեսուրսների պահպանում և օգտագործում» ծրագրի շրջանակներում 2013 թվականին հիմնված ծիրանենու կոլեկցիոն այգում, որտեղ պահպանվում են ծիրանենու 87 գենետիկ սորտ, որոնցից 82-ը հայկական ծիրանենու սորտեր են: Կենտրոնի մասնագետները նշել են, որ այս տարի մեծ է եղել ծիրանի խտավական սորտերի բերքատվությունը:

Նախարարը եղել է նաև անցյալ տարի կենտրոնում հիմնված խաղողի կոլեկցիոն այգում, որտեղ մշակվում են տեղական սեղանի և տեխնիկական սորտեր: Այգում նախատեսվում է հավաքագրել հայկական խաղողի մոտ 360 սորտ, և հավաքագրելու գործընթացը շարունակվում է: Նշվել է, որ այգում նախատեսվում է հիմնել ֆիլոքսերադիմացկուն սորտերի տնկարանային տնտեսություն: Կենտրոնը նաև 23 հա-ի վրա իրականացնում է ցորենի էլիտայի արտադրություն, իսկ 5.5 հա-ի վրա՝ գարու սուպեր էլիտայի:

Այնուհետև Իգնատի Առաքելյանը ուղևորվել է Մերձավան համայնք, որտեղ մասնակցել է գյուղատնտեսության նախարարության և «Ագրոինտեքս» ընկերության հետ համատեղ հիմնվող տնկարանի բացման արարողությանը: Նախարարին զեկուցվել է, որ նորաբաց տնկարանում աճեցվելու են ծիրանենու, տանձենու, խնձորենու, կեռասենու, ընկուզենու տնկիներ: Նախատեսվում է հիմնել նաև ցուցադրական այգիներ: «Նախատեսում ենք հաջորդ տարի տնկարանային տնտեսություն ունենալ, որի հիմնումը նաև թույլ կտա նվազեցնել տնկիների արժեքը, ինչն ինտենսիվ այգիների հիմնման ինքնարժեքի մեջ ամենամեծ մասնաբաժինն է կազմում: Ինտենսիվ այգիների ստեղծումը ենթադրում է նոր կաթիլային համակարգի և հակակարկտային ցանցերի ներդրում, որն աստիճանաբար կխթանի արդյունաբերական գյուղատնտեսության զարգացմանը», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարը նշել է, որ նախարարությունը մշակել է հակակարկտային ցանցերի երկարաժամկետ վարկերի սուբսիդավորման ծրագիր, որին կարող են մասնակցել բոլոր գյուղացիական տնտեսությունները: Նախարարը հույս է հայտնել, որ կգտնվեն ներդրողներ, ովքեր կկառուցեն գործարաններ և տեղում կարտադրեն հակակարկտային ցանցեր, ինչն ավելի մատչելի կդարձնի ցանցերի ձեռքբերումը: «Ագրոինտեքս» ընկերության սեփականատեր Դավիթ Չիտչյանը նշել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ նախատեսվում է իրականացնել ինտենսիվ այգիների կառուցման համար տնկիների աճեցման ծրագիր: Ծրագրով նախատեսվում է թզուկային և կիսաթզուկային տնկիների աճեցում, ինչը հնարավորություն կտա նվազեցնել տնկիների արժեքները և դրանք մատչելի դարձնել գյուղացիների համար:

Ընկերությունը նախատեսվում է իրականացնել նաև «Կառուցիք ինքը քո այգին» նախագիծը. այնտեղ լինելու են տիպային նախագծերով ցուցադրական այգիներ, որտեղ ցանկացողները կարող են այցելել և տեղում ծանոթանալ պայմաններին, ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն և ընկերության մասնագետների օգնությամբ, ինքնուրույն կառուցել իրենց այգիները:

Աշխատանքային այցի ավարտին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը եղել է «ԱՐՄ ՊԼԱՍՏ» ՓԲԸ-ում, շրջել ընկերությունում, գրուցել աշխատակիցների հետ, ծանոթացել ընկերության արտադրական հզորություններին:

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

### Ոլորտի զարգացումը նոր թափ է ստանում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանն ընդունել է Շինչիլաբույծների հայկական ասոցիացիայի ներկայացուցիչներին: Հանդիպմանը մասնակցում էին նաև նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը և Անաստաբուծության և անասնաբուծության վարչության պետ Լևոն Տեր-Իսահակյանը:

Հանդիպման նպատակը՝ Հայաստանում շինչիլաբուծության՝ որպես այլընտրանքային անասնապահության ճյուղի զարգացման հեռանկարներին վերաբերող հարցերի քննարկումն էր:

Շինչիլաբույծների հայկական ասոցիացիայի հոգաբարձուների խորհրդի նախագահ Նարեկ Վարդանյանը ներկայացրել է ոլորտի ներկա վիճակը: Նախարարին տեղեկացվել է, որ ներկայումս Հայաստանում շինչիլաբուծության 50-60 տնտեսություն է ձևավորված, որտեղ առկա է 3000-3200 գլուխ շինչիլա: Առաջիկա մեկ տարում ասոցիացիան նա-

խատեսում է ևս 1000 գլխաքանակի ներմուծում իրականացնել: Նշվել է նաև, որ Շիրակի, Գեղարքունիքի մարզերում, Սյունիքի լեռնային գոտում, ինչպես նաև Կոտայքի մարզի որոշ հատվածներում պայմաններն ավելի նպաստավոր են շինչիլաբուծության զարգացման համար:

Հանդիպման ընթացքում մասնավորապես անդրադարձ է կատարվել Հայաստանում շինչիլայի մորթու վերամշակման գործարան հիմնելու, շինչիլաբուծությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների հաշվառման, ինչպես նաև ուսուցողական դասընթացների և խորհրդատվական ծառայությունների կազմակերպման և այլ հարցերի շուրջ համագործակցության հարցերին:

Շինչիլաբույծների հայկական ասոցիացիայի մասին համապարփակ տեղեկատվություն զետեղված է ասոցիացիայի պաշտոնական՝ shinshila.am կայքէջում:

### ԳԴՀ Հյուսիս-Հոնոլուլուի Վեստֆալիայի արհմիությունների միավորման պատվիրակությանը գյուղատնտեսության նախարարությունում

ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանն ընդունել է ԳԴՀ Հյուսիս-Հոնոլուլուի Վեստֆալիա երկրամասի արհմիությունների միավորման երիտասարդական թևի ղեկավար Էրիկ Շլեյի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ Հասմիկ Ջհանգիրյանը, ոլորտի այլ ներկայացուցիչներ:

Ողջունելով հյուրերին՝ Ռոբերտ Մակարյանը կարևորել է արհմիությունների դերն աշխատողների իրավունքների պաշտպանության գործում: «Ուժեղ արհեստակցական միությունը թույլ է տալիս վեր հանել առկա խնդիրները, բարելավել աշխատողների աշխատանքային պայմանները: Մենք նույնպես մեծ ուշադրություն ենք դարձնում արհմիությունների զարգացմանը՝ նրանց հետ սերտ համագործակցելով և համատեղ ծրագրեր իրականացնելով», - նշել է Ռոբերտ Մակարյանը:

Պատվիրակության ղեկավար Էրիկ Շլեյն իր հերթին հանգամանորեն ներկայացրել է Գերմանիայում արհմիությունների իրավական կարգավիճակն ու գործունեության կազմակերպման հիմնական սկզբունքները, ինչպես նաև արհեստակցական միությունների արդի մարտահրավերները: Այնուհետև կողմերը քննարկել են Հայաստանում և Գերմանիայում արհմիությունների գործունեությանն առնչվող հարցեր: Մասնավորապես, անդրադարձ է կատարվել ոլորտում գործող օրենսդրությանը, դեպի գյուղատնտեսության ոլորտ երիտասարդ կադրերի ներհոսքի ապահովմանը, ֆինանսավորման աղբյուրների ներգրավմանը և այլ հարցերի շուրջ, տեղեկատվությամբ փոխանակվել գյուղատնտեսության բնագավառում ինքնազբաղ աշխատողների խնդիրների վերաբերյալ: Կարևոր խնդիրների թվում մատնանշելով մասնագիտական կրթության որակի բարձրացման անհրաժեշտությանը՝ փոխնախարար Ռոբերտ Մակարյանը միաժամանակ հավելել է, որ ագրարային ոլորտի մի շարք ուղղությունների, մասնավորապես գինեգործության, շերմոցային տնտեսությունների և պահածոյագործության ոլորտների զարգացմանը զուգահեռ աստիճանաբար նկատվում է այդ ճյուղերի նկատմամբ հետաքրքրության աճ երիտասարդների շրջանում: Ագրոաշխատողների արհմիության նախագահ Հասմիկ Ջհանգիրյանը նշել է, որ ներկայումս Հայաստանում քայլեր են ձեռնարկվում գյուղաօրհորտի ներկայացուցիչներին ըստ ճյուղերի միավորելու ուղղությամբ՝ ծառացած խնդիրների լուծումն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով:



## ԽՈՐՀՐԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Մեկնարկում է ծրագիրը

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում օրերս կայացել է խորհրդակցություն՝ նվիրված Գյուղատնտեսության քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման ծրագրի քննարկմանը:

Խորհրդակցությանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը, ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Էյջի Տագուչին, Համաշխարհային բանկի գյուղատնտեսության գծով գլխավոր տնտեսագետ Բեկզո Շամսինը, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի գյուղատնտեսության գծով գլխավոր մասնագետ Արուսյակ Ալավերդյանը: Հանդիպմանը մասնակցում էին նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Գեղամ Գևորգյանը, պաշտոնատար այլ անձինք: «Մենք չունենք գյուղատնտեսական ոլորտի զարգացման համար անհրաժեշտ դեգագրեզացված գյուղատնտեսական տվյալների բազա, որը մեզ հնարավորություն կտար մշակել գյուղատնտեսության զարգացման ծրագրեր: Շնորհակալ ենք ճապոնիայի կառավարությանը և Համաշխարհային բանկին՝ գյուղատնտեսության բոլոր ցուցանիշներն ու տվյալները թվայնացնելու ծրագրի մասին մեր առաջարկն ընդունելու և աջակցելու համար», - նշել է գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը: Ճապոնիայի

դեսպանը նշել է, որ ճապոնիայի կառավարության աջակցությունը Հայաստանի Հանրապետությանը հիմնականում միտված է սոցիալական և տնտեսական զարգացման ուղղություններին, և ծրագրի մեկնարկը կարևոր քայլ է գյուղատնտեսության զարգացման համար:

Ներկայացնելով ծրագրի մանրամասները՝ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Գեղամ Գևորգյանը տեղեկացրել է, որ ճապոնիայի կառավարության կողմից Համաշխարհային բանկի միջնորդությամբ տրամադրվել է 1.8 մլն դոլարի դրամաշնորհ, որի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսության ոլորտում մոնիթորինգի և տվյալների հավաքագրումն է: Աշխարհագրական թվայնացման նշված համակարգով իրականացվում է տեղեկարկական պատկերների, հեռավար զոնդավորման, սպեկտրալ անալիզի վերլուծություն, վնասների գնահատում, գյուղատնտեսության ոլորտում առկա ամբողջ տվյալների հավաքագրում (հողերի կարգավիճակ, մշակովի և անմշակ հողտեսքեր, ջրային ռեսուրսներ, աճեցվող մշակաբույսերի տեսակներ): Ծրագրի մեկնարկը նախատեսվում է ս/թ հուլիս ամսին՝ հանրապետության մեկ մարզում, պիլոտային ձևաչափով: Ծրագրի աշխատանքներում կներգրավվեն հայ մասնագետները, ովքեր կանցնեն վերապատրաստում՝ ծրագրի հետագա սպասարկումը ևս իրականացնելու համար:



## ՆՊԱՏԱԿԱՐԿԱԾ ԾՐԱԳՐԵՐ

### ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԻԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

*Ազգային ժողովի մեծարգո նախագահ,  
Հարգարժան պարոն փարչապետ,  
Հարգելի պարզամտություններ,*

Ձեզ է ներկայացվում գյուղատնտեսության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով նպատակադրված ծրագրերը և նպատակները: Նախատեսում ենք տարեկան առնվազն 5 տոկոսով ոլորտի համախառն արտադրանքի ավելացում, պարենային անվտանգության մակարդակի բարձրացում, բարձրաժեշտ գյուղատնտեսության զարգացում, արդիական տեխնոլոգիաների ներդրում, ներմուծման փոխարինում, արտահանման ծավալների ավելացում և տնտեսավարողների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում:

Գյուղատնտեսության ոլորտում շատ խնդիրներ կան, և ներկայացված հարցերը կապված բնակլիմայական աղետների հետ մտահոգում է նաև ՀՀ կառավարությանը և այսօր կներկայացնենք նշված խնդիրների լուծումներ: Չնայած այդ խնդիրներին՝ մենք ունենք նաև շատ դրական ազդակներ. ունենք խոշոր ընկերություններ, որոնք կատարում են զգալի ֆինանսական ներդրումներ, նոր տեխնոլոգիաներ են կիրառում և հաջողություններ են գրանցում թե՛ արտադրության, թե՛ արտահանման մեջ:

Գյուղատնտեսության նախարարությունն աշխատանքներ է իրականացնելու նոր ծրագրով պայմաններ ստեղծել, որպեսզի մեր երկրում փոքր և միջին գյուղացիական տնտեսությունները ևս զարգանան և եկամուտներ ապահովեն: Գյուղատնտեսության ոլորտում կենտրոնանալու ենք ոլորտի ներդրումների ապահովագրության, արդյունավետության բարձրացման, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման և ժամանակակից ֆերմերային տնտեսությունների զարգացման վրա:

**Նշված թիրախներին հասնելու համար անհրաժեշտ է առաջնահերթ ներդնել հետևյալ ծրագրերը.**

**Գյուղատնտեսական ոլորտի զարգացման համար անհրաժեշտ դեզագրեզացված գյուղատնտեսական տվյալների բազայի ստեղծման համար իրականացնելու ենք Աշխարհագրական թվայնացված համակարգի (ԱԹՀ) ներդրման ծրագիրը:** Արդյունքում կունենանք հողերի ֆիզիկական և իրավական կադաստր, ինչը թույլ կտա վերլուծելու հողերի կարգավիճակը, մշակովի է այն թե՛ անմշակ, ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, տվյալ տարածքում աճեցվող մշակաբույսերի տեսակներ, տեղի ունեցող աշխարհագրական գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն, կլիմայի ազդեցության վերաբերյալ տվյալները, գյուղատնտեսական նշանակության մոնիտորինգային տվյալները, օրինակ՝ վնասի գնահատում և այլն: Ելնելով տվյալ տարածաշրջանի առանձնահատկություններից՝ վեր ենք հանելու մանրամասն համեմատական վերլուծություններով, խորհրդատվություն ենք տրամադրելու մշակաբույսերի տեսականու, ոռոգման ինտենսիվության, պարարտանյութերի տեսակի վերաբերյալ: Առանցքային է գյուղատնտեսության մեխանիզացիայի խնդիրը: Այն լինելու է մեր կարևորագույն թիրախներից, և էական դերակատարում է ունենալու հատկապես փոքր ու միջին տնտեսությունների արդյունավետության բարձրացման համար:

**Արդեն իսկ ընթացիկ տարում մեկնարկել է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը:**

Այդ ծրագրով տնտեսավարողների համար իրականացվում է լիզինգով մատչելի տոկոսադրույքով գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարում: Ծրագրով գյուղացիական տնտեսություններին արդեն իսկ տրամադրվել է շուրջ 21 միավոր տրակտոր և 12 միավոր այլ գյուղտեխնիկա: Բացի այդ, ստեղծվելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարության Գյուղատնտեսական տեխնիկայի կայան (ԳՏԿ), որի շնորհիվ կարող են ժամանակակից գյուղատնտեսական ծառայություններից օգտվել նաև այն փոքր տնտեսավարողները, որոնք չունեն բավարար ֆինանսական միջոցներ՝ լիզինգի ծրագրով գյուղտեխնիկա ձեռքբերելու համար:

**Արտադրողականության բարձրացման ուղղությամբ նախատեսում ենք իրականացնել նաև հետևյալ ծրագրերը.**

**Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնամաք այսօր կխթանենք պտղաբուծության զարգացումը և կավելացնենք արտահանումը:**



Հայաստանում զարգացում է ապրում ջերմոցաշինությունը. հիմնվում են նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ջերմոցային տնտեսություններ, որոնք իրենց արտադրանքի զգալի մասն արտահանում են: Նախատեսվում է նաև աջակցել փոքր հողատեքերում բարձրաժեշտ մշակաբույսերի մշակությամբ զբաղվող տնտեսավարողներին, որը մեծ պահանջարկ ունի միջազգային շուկայում: Ուստի, այդ մշակաբույսերի աճեցումը փոքր տնտեսությունների համար շահավետ և եկամտաբեր ուղղություն կարող է լինել:

**Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով** էլ նախատեսվում է խթանել բազմամյա տնկարկներում պտղատու և խաղողի այգիներում, բարձրաժեշտ մշակաբույսերի դաշտերում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման գործընթացը: Արդյունքում կունենանք բերքի որակի բարելավում, հանրապետության ջրային, էներգետիկ և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում, մշակովի հողատարածքների ընդլայնում՝ պտենցիալ ոռոգելի, սակայն փաստացի չմշակվող տարածքների մշակման խթանում: Բուսաբուծության ոլորտում նախատեսվում է ամրապնդել նաև սերմնաբուծության, սերմնարտադրության և սերմապոհման սելեկցիոն կայանների կարողությունները, ընդլայնել դրանց ցանցը, ինչպես նաև շարունակել սերմերի որակի ստուգման և պետական օրոտափորձարկման ծրագիրը:

**Նախատեսվում է շարունակել գյուղօլորտին նպատակային վարկերի տրամադրման պետական աջակցության ծրագիրը**՝ առավել բարելավելով պայմանները, մասնավորապես, տրամադրվող մինչև 3 մլն դրամի շեմը բարձրացնել՝ նվազագույն շեմը սահմանելով՝ 3, իսկ առավելագույնը՝ 10 մլն դրամ և առավել մատչելի դարձնել տոկոսադրույքը: Այս ծրագիրը հնարավորություն կընձեռի զարգացնել փոքր և միջին տնտեսությունները, որպեսզի նրանք արդյունավետ գյուղատնտեսություն վարեն՝ հիմքում ունենալով հստակ քիզնես ծրագիր:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն աշխատանքներ է իրականացնում նաև մեր արտահանման այցեքարտը հանդիսացող կոնյակագործության և գինեգործության վարկանիշի բարձրացման և մրցունակության ապահովման համար: Այսօր գործում է խաղողագործության և գինեգործության զարգացման հիմնադրամը, որը հնարավորություն կընձեռի ստեղծել մի հարթակ, որտեղ խաղող արտադրողները և մթերողները միմյանց հետ կհամագործակցեն, որի արդյունքում կբարելավվի գինու և կոնյակի արտադրանքի որակը, կբարձրանա հայկական գինու ճանաչելիությունը և կավելանա արտահանումը: Ներկայում գյուղացիական տնտեսությունների համար արդիական է մնում արտադրած գյուղմթերքի իրացումը և վերամշակողների կողմից ֆինանսական պարտավորությունների ժամանակին կատարումը:

**Նախարարությունը մշակել է Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ազրովերամշակման ոլորտին մատչելի պայմաններով վարկերի տրամադրման ծրագիր:** Վերամշակողներին կտրամադրվեն մատչելի տոկոսադրույքով վարկեր, որոնք պետք է նպատակաուղղվեն բացառապես մթերվող գյուղատնտեսական հումքի արժեքի վճարմանը: Այսպիսով՝ գյուղացիական տնտեսությունների համար հնարավորություն կստեղծվի կարճ ժամկետում ստանալ իրացված հումքի արժեքը:

Գյուղատնտեսության ոլորտում շարունակվում է արդիական մնալ անհրաժեշտ մասնագետներով համալրման հարցը: Այդ նպատակով մենք կվերակառուցենք Խորհրդատվական բլոկը: ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ, Եվրոպական Միության աջակցությամբ նախատեսում ենք

Լոռու մարզում ստեղծել ագրարային կրթական կլաստեր, որն իր մեջ կներառի միջնակարգ, բարձրագույն և գիտական մաս, ինչպես նաև կպարունակի գործնական դասընթացներ, այսպիսով կբարձրացնենք ֆերմերային կրթության մակարդակը մեր երկրում:

**Գյուղական խորհրդատվական ծառայությունների ծրագրով նախատեսում ենք նաև գյուղացիական տնտեսությունների շրջանում իրականացնել լայնամասշտաբ իրազեկման աշխատանքներ՝ պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ և հետևողական լինել ծրագրերի իրագործման ընթացքին:**

Գյուղատնտեսության կարևոր ուղղություններից է նաև անասնաբուծության ճյուղի զարգացումը, որը թույլ կտա մեր ազգաբնակչությանն ապահովել որակյալ կաթնամթերքով և մսամթերքով: **Տոհմաբուծարանների ստեղծման և զարգացման ծրագրով** նախատեսվում է հանրապետությունում տավարի նախիրները համալրել բարձրաժեշտ տոհմային կենդանիներով: Ոլորտի կարևոր նախապայման է նաև անասնաբուծության զարգացումը՝ որպես հանրապետությունում հակաանասնահամաճարակային կայուն իրավիճակի ապահովման երաշխիք: Նախարարությունը նախատեսվում է մշակել գործուն մեխանիզմներ պատվաստումների որակի բարձրացման և մատուցվող ծառայությունների բարելավման հարցերում: Անտառային ոլորտում նախատեսվում է իրականացնել անտառապահպանման ծառայությունների կատարելագործման, հսկողության և անտառների կառավարման արդյունավետության բարձրացման ծրագիր:

Մեր ուշադրության կենտրոնում է լինելու նաև սննդամթերքի անվտանգության ապահովումը, ուստի նախատեսվում ենք ներդնել գյուղատնտեսական կենդանիների նույնականացման, հաշվառման և համարակալման թվայնացված համակարգ, բարձրացնել սննդամթերքի անվտանգության լաբորատոր հսկողության մակարդակը, պարզեցնել վարչարարությունը ներմուծվող սննդամթերքի որակի նկատմամբ, խստացնել սննդի որակի վերահսկողությունը, փուլային անցում կատարել պարտադիր սպանդանոցային մորթի կիրառմանը:

Թվարկված ծրագրերի արդյունավետությունը և գյուղատնտեսության զարգացման համար հիմնական խնդիրը ռիսկն է, որն ունեն գյուղացիական տնտեսությունները՝ ոլորտում ներդրումներ կատարելու համար: Դրա համար իրականացնելու ենք նաև արտադրողի պաշտպանությանն ուղղված համալիր միջոցառումներ:

**Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում հակակարկտային ցանցերի ներդրման պետական աջակցության ծրագրով** նախատեսվում ենք վարկային տոկոսադրույքի սուբսիդավորման կիրառում, որով գրեթե կբացառվեն կարկտահարության վնասները, կբարձրանա ապահովագրության համար գրավչությունը, կբարելավվի բերքի որակը, կավելանան տնտեսավարողների եկամուտները: Արտակարգ իրավիճակների նախարարությունը նախատեսում է ստեղծել հակակարկտային պաշտպանության համակարգի առավել արդյունավետ և փոխլրացնող համակարգ՝ ներառելով նաև իրթոռային պաշտպանության ժամանակակից միջոցներ: Գյուղատնտեսության նախարարությունը նախատեսում է ապահովագրական համակարգի ներդրմամբ ճիշտ և թիրախային ներդրումների հոսք ապահովել: Այն կունենա կրկնակի արդյունք՝ կբարձրացնենք գյուղատնտեսության ոլորտի արդյունավետությունը և կապահովենք նոր ներդրումներ:

**ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նախատեսում է 2018 թվականից սկսել ապահովագրական համակարգի փորձնական ծրագրի կիրառումը:** Թվարկված ծրագրերից զատ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ համատեղ աշխատանքներ են իրականացվում, որպեսզի հնարավորություններ ստեղծվի փոքր ու միջին գյուղացիական տնտեսությունների համար, որպեսզի նրանք միավորվեն և մեկ ապրանքանիշի անվան ներքո արտահանեն իրենց արտադրանքը:

Ամփոփելով վերոնշյալ ծրագրերը՝ պետք է նշենք, որ դրանք միտված են ոլորտում իրականացվող համակարգային զարգացումներին, որոնք մեզ հնարավորություն կտան 2-3 տարի անց ունենալ անհրաժեշտ և բավարար հիմք, որպեսզի մեր երկրում զարկ տանք արդյունաբերական, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած, բարձրակարգ մասնագետներով համալրված գյուղատնտեսությանը:



## ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### ԱԶՆԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ԲԱՐԻՔՈՎ

ՀՀ Կուրայքի մարզի Ֆանտան համայնքում է գտնվում Սուրիկ Առաքելյանի, ընտանեկան ֆերմերային գործունեության արդյունքում ստեղծված վերամշակման փոքրիկ արտադրամասը, որը մասնագիտացել է բուսական ծագման յուղերի արտադրության գծով: Հիմնական արտադրարեսականին, Սուրիկ Առաքելյանի տեղեկացմամբ, կրավարի յուղն է, որի հումքի ստացման համար ֆերմերը կատարում է զանգվածային ցանքեր, կազմակերպում է նաև սերմարտադրություն:



Անհերքելի է բուսական յուղերի առողջարար լինելու հանգամանքը, մասնավոր, երբ դրանք պատրաստվում են օրգանական ծագման հումքից: Եվ քանի որ կտավատի յուղը լայն կիրառություն ունի ոչ միայն հայկական ավանդական խոհանոցում, այլև օժտված է բուժական նշանակությամբ, Ֆանտանի բնակիչ Սուրիկ Առաքելյանը, տարիներ առաջ ձեռնամուխ եղավ կազմակերպել թե՛ կտավատի արտադրություն, և թե՛ դրանից պատրաստվող, որակական և համային հատկանիշներով աչքի ընկնող յուղ: Վերջինս արտադրվում է սառը ճզմման եղանակով, ինչի արդյունքում պահպանվում են բույսի որակական հատկանիշները, վիտամինային կազմը: Սուրիկ Առաքելյանը նշում է, որ կտավատի հումքը, յուղի ստացման նպատակով, օգտագործվում է առանց բովելու, որը նույնպես նպաստում է որակական հատկանիշների պահպանմանը: Թե՛ արտադրական գործընթացում, և թե՛ ցանքի ու մշակության աշխատանքներում ընդգրկված են հիմնականում ընտանիքի անդամները, իսկ բերքահավաքի ընթացքում ունենում են նաև սեզոնային աշխատողներ: Յուրաքանչյուր տարի ցանում են 3-4 հա կտավատ, որը հեկտարից ապահովում է 1,5-2 տոննա բերք:

«Որակյալ հումք ստանալու համար կարևորվում է ագրոտեխնիկայի կանոնների պահպանումը, հողի մշակության աշխատանքների ճիշտ և ժամանակին կատարումը: Այսպես, օրինակ՝ որակյալ յուղ ստանալու համար պետք է օգտագործվի միայն օրգանական պարարտանյութով սնուցված կտավատ: Այլապես, ազոտական պարարտանյութով պարարտացնելու դեպքում, կտավատից ստացված յուղը փոխում է համային հատկանիշները, տուժում է նաև արտադրանքի ապրանքային տեսքը, յուղի գույնը լինում է մուգ կարմրավուն և ոչ գրավիչ», - նշում է փորձառու մասնագետը, ապա հավելում, որ հողը չի՝ սիրում թերահավատություն, նրան պետք է հավատով և վստահությամբ մոտենալ: «Առանց չարչարանքի և ջանքեր ներդնելու ոչնչի չես հասնի: Կարևորը ազնիվ աշխատելն է, յուրաքանչյուր ոք պետք է պատասխանատվության զգացում ունենա իր խղճի առաջ՝ այս կամ այն գործը կատարելուց: Իսկ ազնիվ աշխատանքը միշտ էլ փոխհատուցվում է բարիքով», - համոզված է Սուրիկ Առաքելյանը: Թեև գոմաղբով պարարտացնելու դեպքում մեծ է չարչարանքը, գործընթացն աշխատատար է (պարարտավում է կոմպոստ, որը մտցվում է հող), այնուամենայնիվ, ֆերմերը չի զլանում, պատրաստ է կատարել դժվարին և աշխատատար այդ աշխատանքը, միայն թե

որակյալ հումք ստացվի: «Չէ՞ որ կտավատի յուղն օգտագործում են նաև բուժման նպատակով: Դրա համար պետք է որակյալ արտադրանք թողարկել, չի՞ կարելի խաբել սպառողին», - իր համոզմունքն է հայտնում ֆերմերը:

Թեև արտադրանքը չունի օրգանականի սերտիֆիկատ, այնուամենայնիվ, լիովին բավարարում է վերջինիս պահանջները: Կտավատ մշակում են նաև ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի, Արագածոտնի մարզերում. ֆերմերը, որպես հումք օգտագործելու համար, արտադրության մեջ երբեմն կատարում է նաև մթերումներ: Այդ դեպքում ցանքի և մշակության աշխատանքները հիմնականում կատարվում են իր ցուցումներով, որպեսզի ստացվի որակի պահանջներին համապատասխան հումք և յուղի բարձրորակ արտադրանք: Ի դեպ, արտադրում են նաև արևածաղկի (չռաֆինացված), դդմի, համեմի, կանեփի սերմերից, ինչպես նաև նշի և ծիրանի կորիզներից ստացված յուղեր, ունենում են նաև քունջութի և ընկուզի յուղի պատվերներ: Արտադրանքի գինը, ըստ Սուրիկ Առաքելյանի, թեև մատչելի է, այնուամենայնիվ առկա է իրացման խնդիրը: Պատճառը, ըստ արտադրողի, բնակչության ցածր գնողունակությունն է: «Այսպես, օրինակ, արևածաղկի չզտված ձեթը մեծ կիրառություն ունի հայկական ավանդական խոհանոցում, սակայն, ոչ բոլոր տնային տնտեսուհիներն են ի վիճակի գնելու այն: Թեև մաքուր, հավելանյութերից զերծ և անարատ այդ յուղով պատրաստված աղցաններն ու ճաշատեսակներն աչքի են ընկնում համային հատկանիշներով, բայց դժվարությամբ են իրացվում: Եվ դա այն դեպքում, երբ ստացվում



է առողջարար սնունդ», - նշում է Սուրիկ Առաքելյանը:

Պետք է ճիշտ կատարել նաև արտադրանքի տարալարումը, բուսական յուղերը պետք է պահպանվեն, մուգ տարաներում, դրվեն մութ և սառը տեղում, որպեսզի պահպանվեն յուղերի որակական հատկանիշները: Ստացված արտադրատեսականու փաթեթավորման համար արտադրամասն ունի նաև հոսքազծի անհրաժեշտություն: Ինչ վերաբերում է իրացմանը, այդ խնդրի կարգավորման համար, Սուրիկ Առաքելյանի կարծիքով, պետք է մուտք գործել միջազգային շուկա, սակայն դրա համար պետք է ձեռք բերել համապատասխան փաստաթղթեր, սերտիֆիկատ և այլն: Այդ նպատակով պետք է ընդլայնել արտադրությունը, սակայն այստեղ նույնպես ներդրումներ են հարկավոր, որը չի կարող կատարել փոքրիկ արտադրամասը: Արտադրում են ավելի քան 20 անուն յուղատեսակներ: Արտադրանքն առայժմ թողարկում են՝ ըստ պահանջարկի, անհրաժեշտության դեպքում՝ կատարում են նաև առաքումներ: Ֆերմերը զբաղվում է նաև մեղվաբուծությամբ, ստանում է բարձրորակ անարատ մեղր:

Չնայած դժվարություններին՝ լավատես է: «Երբ Նոյն իջավ Արարատից, Աստված նրան խոստացավ, որ օրհնելով պիտի օրհնի նրա աշխատանքը, նրա տարածքը, երկիրը, որտեղ պիտի ապրի Նոյը՝ իր ընտանիքով: Այդպիսով, Հայաստանը և Արցախը այդ օրհնված երկրներն են, դրա շնորհիվ է, որ համեղ է մեզ մոտ արտադրված միրգը, բանջարեղենը, միսը, կաթը, և նույնիսկ՝ ջուրը», - իր խոսքը եզրափակում է Սուրիկ Առաքելյանը:

## ԿՐԹԱԿԱՆ

### ՔՈՒԵՁԸ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ՄՐՑՈՒՆԱԿ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐ

Սպիտակի պետական քոլեջը հիմնադրվել է 1994 թ-ին: Քոլեջը ստեղծվեց հանրապետության համար տնտեսապես ծանր տարիներին, ՀՀ գիտությունների ակադեմիայի աշխարակիցներ՝ ակադեմիկոս, Լենինյան մրցանակի դափնեկիր Թինա Լևանի Ասաթյանի և դոկտոր-պրոֆեսոր Օլգա Աշոտի Ջուհարյանի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ: Իր 23-ամյա գործունեության ընթացքում Սպիտակի քոլեջի տնօրինությունը, ողջ մանկավարժական կոլեկտիվն անընդմեջ աշխատանք են կատարում մասնագետների որակավորման բարձրացման, համամարդկային արժեքների, անհատականության ազատ զարգացման, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապարկության, հայրենասիրության և օրինականության դաստիարակման ուղղությամբ: «Ագրոլարում» թերթի հյուրն է քոլեջի տնօրեն Զուլիկա Թանկաբեկյանը:

Տիկին Թանկաբեկյան, ինչ մասնագիտություններ են ուսուցանվում քոլեջում:

- Սպիտակի պետական քոլեջում ուսուցանվում են «Հաշվապահական հաշվառում աուդիտ», «Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», ինչպես նաև «Գյուղատնտեսագիտություն» մասնագիտությունները:

-Գաղտնիք չէ, որ ուսանողների կրթական մակարդակը պայմանավորված է նաև դասավանդող դասախոսներով: Ինչ կասեիք դասախոսական կազմի մասին:

Քոլեջի գործունեության առավելություններից մեկը կայանում է նրանում, որ այն ունի մասնագիտական երկարամյա փորձ ունեցող, բարձրագույն կրթությամբ դասախոսներ, որոնց ամենօրյա քրտնաջան աշխատանքն իր պտուղներն է տալիս: Քոլեջում աշխատում են 21 բարձրագույն կրթությամբ և մեկ միջին մասնագիտական կրթությամբ դասախոսներ: Առաջնորդվելով «Մանկավարժը դադարում է այդպիսին լինելուց այն պահից, երբ դադարում է սովորել» սկզբունքով՝ դասախոսներն անընդհատ ծանոթանում են կրթական համակարգում և առանձին ծրագրերում տեղի ունեցող փոփոխություններին, կատարելագործում դրանք, զբաղվում ինքնակրթությամբ և ինքնազարգացմամբ, անմնացորդ նվիրվում ուսանողներին՝ գիտելիքների հաղորդման, հմտությունների ու կարողությունների ձևավորման գործին:

-Կրթօջախը ինչպիսի բարեփոխումների ու կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվել մինչև օրս:

-2012-2013 թթ. ուսումնական տարվանից Սպիտակի պետական քոլեջն իր գործունեությունն իրականացնում է նոր ուսումնական շենքում (ՀՀ կառավարության 13.02.2012 թ-ի թիվ 192-Ա որոշման համաձայն, Սպիտակի քոլեջին հատկացվել է անշարժ գույք Ավետիսյան 273 հասցեում՝ անհատույց օգտագործման իրավունքով):

Նախորդ տարի կատարվել է ուսումնական շենքի վերանորոգում և կենտրոնացված ջեռուցման անցկացում: Բարեկարգման աշխատանքները շարունակվում են: Ինչ վերաբերում է կառուցվածքային փոփոխություններին, ապա 2001 թթ. օգոստոսի 10-ի «Հայաստանի Հանրապետության նախնական և միջին մասնագիտական կրթության համակարգի ռացիոնալացման ծրագիրը հաստատելու մասին» N 741 որոշման համաձայն, Սպիտակի նախկին N90 ՄՏՈՒ-ն լուծարվել է և ՀՀ կառավարության 2002 թ.-ի հոկտեմբերի 10-ի N1621-Ա որոշմամբ միացել է Սպիտակի պետական քոլեջին: ՀՀ կառավարության 10-06-2011 թ-ի N781-Ն որոշմամբ, Սպիտակի պետական քոլեջին է միացել նաև Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարության Սպիտակի պետական գյուղատնտեսական քոլեջը, որի արդյունքում Սպիտակի պետական քոլեջը դարձել է նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող միակ ուսումնական հաստատությունը տարածաշրջանում: Ելնելով ուսուցանվող մասնագիտությունների արդիական պահանջներից՝ աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ պատրաստելը մեր առաջնահերթ խնդիրներից է: Այդ է պատճառը, որ այսօրվա սուղ աշխատատեղերի պարագայում անգամ, շրջանավարտների զգալի մասն աշխատում է հանրակրթական դպրոցներում, տարբեր կազմակերպություններում՝ որպես տնտեսագետներ, հաշվապահներ, գործավարներ: Շրջանավարտներից 14-ը ուսումը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներն, առանց քննության, ուսումը շարունակում են բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությունների երկրորդ կուրսում: Քոլեջն ունի նորագույն համակարգիչներով համալրված լսարաններ, ավտոգործի դասավանդման տեխնիկայով հագեցած կաբինետ:

Բազմաթիվ շնորհակալագրեր են ստացվել մեր շրջանավարտների աշխատավայրերից և Ազգային բանակում ծառայող մեր ուսանողների գորամասերից: Սպիտակի պետական քոլեջի շրջանավարտները մեր հաստատության դեսպաններն ու քարոզիչներն են, նրա հեղինակությունն ու պատիվը բարձր պահողները:





## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

## ԵՐԿԱՐԱՄՅԱ ՆՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՆՈՐՀԻՎ

Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղը հիմնադրվել է հարյուր տարի առաջ, նախկինում այն անվանել են Ճարկոան, Լուսակերտ, այնուհետև՝ Բազմավան: 1964 թ. գյուղում հյուրընկալված կանադահայերը Բազմավանը նմանեցրել են Արևմտյան Հայաստանի տարածքում մնացած Հին Քղիին և նույն թվականին էլ ՀՍՍՀ Գերագույն խորհրդի որոշմամբ գյուղը վերանվանվել է Նոր Քղի, ժամանակի ընթացքում՝ Նոր Գեղի: Գյուղն այսօր ունի 1500 տնտեսություն, 6500 բնակիչ, շուրջ 500 հեկտար պտղատու այգիներ: 1986 թ. գյուղատվերի նախագահ է նշանակվել և մինչև այսօր գյուղապետ է ընտրվել 1945 թ. ծնված Ֆրոնտիկ Թևոսյանը:

Երկար ժամանակ աշխատել է «Արզնի» առողջարանում՝ տնօրենի տեղակալ, Մարմարիկ հանգստյան տան տնօրեն: Օգտագործելով իր երկարամյա աշխատանքային փորձը, 30 տարի ղեկավարելով Նոր Գեղի համայնքը՝ կարողացել է լուծել լուսավորության, առֆալտապատման, խմելու և ոռոգման ջրերի, գազաֆիկացման և այլ բնույթի բազմաթիվ կարևոր խնդիրներ, որոնք զգալի կերպով թեթևացրել են գյուղի բնակիչների սոցիալ-կենցաղային պայմանները:

Պարոն Թևոսյան, համայնքի գյուղատնտեսական, հատուկ նշանակության հողերը որքան տարածք են զբաղեցնում, բնակիչների հիմնական մասը որտեղ է աշխատում:



Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 1200 հա, ինչպես նաև ունենք 3-4-հա հանգստի գոտի: Մեր համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են այգեգործությամբ: Տարածքում առկա է 500 հա ինտենսիվ այգիներ, եթե մի ընտանիքը մեկ հա այգի է ունենում, կարողանում է հոգալ իր ամբողջ հոգսերը: Համայնքի տարածքում է գտնվում Լուսակերտի թոշնաբուծական ֆաբրիկան, թանկարժեք քարերի գործարանը, հանքեր, Գյուղատնտեսական քոլեջը,

երեք մսուր-մանկապարտեզ, երեք դպրոց, որոնք բնակիչների համար ապահովում են աշխատատեղեր: Գյուղում բնակվող բազմաթիվ եզդի ընտանիքներ հաշտ ու համերաշխ ապրում և աշխատում են հայ բնակչության հետ: Փախստական ընտանիքները սեփականաշնորհման ժամանակ ստացել են այգիներ, վարելահողեր և տնամերձ հողամասեր, որտեղ կառուցել են սեփական տներ՝ մի մասը՝ իրենց, մյուս մասն էլ՝ պետության միջոցներով:

**Ձեր ղեկավարած համայնքում, 30 տարիների ընթացքում շատ կարևոր աշխատանքներ եք կատարել, դրանցից որն է ամենահիշարժանը:**

Այս տարիների ընթացքում, իսկապես բազմաթիվ աշխատանքներ են կատարվել, բայց ամենակարևոր աշխատանքն իմ հովանավորությամբ համարում եմ սբ. Հովհաննես եկեղեցու կառուցումը: 2007 թ. սկսվել է շինարարությունը և նախատեսվել ենք ավարտին հասցնել այս տարի:

**Առաջիկայում ինչ աշխատանքներ ունեք իրականացնելու:**

Ընթացիկ աշխատանքները շատ են՝ բարեկարգում ենք փողոցները, հիմնականում զբաղվում ենք նոր աշխատատեղերի ստեղծմամբ: Արդեն համայնքում տեղակայված է նոր համակարգի 20-25 հա հակա-կարկտային ծածկույթ, որը օրինակ կծառայի, որ բոլորն էլ անցնեն հակակարկտային ցանցերի տեղադրմանը, որպեսզի կարողանան պահպանել բերքը, քանի



որ բնության՝ եղանակի փոփոխությունը իր հետ բերում է աղետաբեր քամիներ, կարկուտներ:

**Ոռոգման, խմելու ջրով ապահովված է այսօր գյուղացին և ընդհանրապես, ինչ խնդիրներ կան:**

Խմելու ջուրը տրվում է 24 ժամ, Նոր Գեղիում շատ լավ է լուծված նաև ոռոգման ջրի հարցը, փակ ցանցով է ոռոգվում: Խմելու և ոռոգման ջրի մատակարարման հետ կապված բոլորքներ չկան: Համայնքի մոտ 80 %-ը գազաֆիկացված է: Սակայն գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատման խնդիր կա, փոսերը ժամանակավորապես լցնում ենք մինչև ասֆալտապատումը: Մենք ունենք «Բանավան» թաղամաս, որտեղ ջրամատակարարումը 15 ժամ է: Այն գտնվում է գյուղից երեք կիլոմետր հեռավորության վրա, որքան էլ ցանկանամ, որ այդ թաղամասում ևս աշխատանքներ իրականացվեն, սակայն հեռավորության պատճառով չի հաջողվում: Համայնքներում նմանատիպ խնդիրներ կառաջանան նաև օպտիմալացման դեպքում, չնայած դեմ եմ օպտիմալացմանը:

**Ձրույցի ավարտին համայնքի ղեկավար Ֆ. Թևոսյանը նշեց, որ ամենից շար ցանկանում է, որպեսզի Հայաստանում առաջնահերթ խաղաղություն լինի, իսկ նոր աշխատատեղերն էլ ավելանան:**

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

## ԿՈՌՊԵՐԱՑԻԱ

## ԿՈՌՊԵՐԱՑԻՎՆԵՐԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆ

**«Բարիք գյուղատնտեսական մթերքների արտադրություն» սպառողական կոոպերատիվը, որը գործում է ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում, ստեղծվել է 2014 թ.-ին՝ «Հեյֆեր Հայաստան» և միջազգային այլ կազմակերպությունների աջակցությամբ: Կոոպերատիվի առաջնահերթ խնդիրը որակյալ մրգի արտադրության, ինչպես նաև՝ արտահանման կազմակերպումն է:**

Սպառողական կոոպերատիվի նախագահ Ահարոն Խաչատրյանի տեղեկացմամբ, կոոպերատիվի անդամներին, որպես մասնագիտական աջակցություն, տրվում է անվճար խորհրդատվություն՝ բույսերի, վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների կատարման ժամկետների, մոլախոտերի դեմ պայքարի, նորագույն տեխնոլոգիաների և այլ հարցերի վերաբերյալ: Կոոպերատիվի անդամները համատեղ են գնում թունաքիմիկատներն ու պարարտանյութերը, որը նպաստում է գների մատչելիությանը: Արտադրված մրգն ու բանջարեղենը վաճառում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բացված գյուղմթերքների իրացման շուկայում (Երևանի Կապան փողոց): Կոոպերատիվի որոշ անդամներ, մրցույթը շահելու արդյունքում, տրամադրվել է դրամաշնորհ, որով ձեռք են բերվել մրգի չորացման սարքավորումներ: Չրագործության ճիշտ կազմակերպման նպատակով ևս կոոպերատիվի անդամ-

ներին մատուցվել է մասնագիտական խորհրդատվություն: Նախատեսվել են ստեղծել սառնարանային տնտեսություն, սակայն այն ֆինանսական լուրջ ներդրումներ է պահանջում, ինչը չի կարող կատարել կոոպերատիվը: «Սառնարանային տնտեսության առկայության դեպքում միրգը կարող ենք պահեստավորել և ձմռան ամիսներին վաճառել ավելի նպաստավոր գներով, բացի այդ, հնարավոր կլինի նաև կազմակերպել արտահանում: Սակայն, առանց ֆինանսական աջակցության, չեն կարող ստեղծել սառնարանային տնտեսություն», - եզրահանգում է Ահարոն Խաչատրյանը:

Կոոպերատիվն ունի 17 հիմնադիր անդամ, որոնց հիմնական զբաղվածությունն այգեգործությունն է, մշակում են խաղողի, ծիրանի և դեղձի այգիներ: Կոոպերատիվի ստեղծմանն աջակցել է նաև Արենիի գյուղապետարանը: Ինչ վերաբերում է հողի մշակության աշխատանքներին, ապա դրանք առայժմ կատարում են մասնավոր տեխնիկայով, կոոպերատիվը դեռևս չունի իր սեփական տեխնիկան, չնայած, նախագահի հավաստմամբ, տեխնիկայի, և հատկապես՝ տրակտորի անհրաժեշտությունը շատ մեծ է: Դա հնարավորություն կընձեռնի հողատարածքները մշակել՝ համաձայն նախնական պլանավորման, որի արդյունքում կմեծանա գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետությունը, միաժամանակ կտնտեսվի նաև դիզվառելիքը: «Կոոպե-



րատիվը չունի ֆինանսական միջոցներ, որը հնարավորություն կտա տեխնիկան ձեռք բերել լիզինգային եղանակով», - հավելում է Ահարոն Խաչատրյանը: Կոոպերատիվի նպատակներից մեկն էլ՝ արտադրության ծավալների ընդլայնումն է, որը նույնպես լուրջ ներդրումներ է պահանջում: Արտադրվող բերքի քանակության ավելացումը հնարավորություն կստեղծեր կազմակերպել նաև մրգի արտահանում: «Շատ երկրներում կոոպերատիվներն արդեն գործունեության լուրջ ճանապարհ են անցել: Միասնական աշխատելով և անհամեմատ քիչ ծախսեր կատարելով, հնարավոր է հասնել բարձր արդյունքների, դա է կոոպերատիվի գաղափարախո-

սության առանցքում», - նշում է նախագահը: Կոոպերատիվի անդամները միասին մշակում են հինգ հա այգետարածք: Խաղողը, համաձայն նախապես կնքված պայմանագրերի, իրացնում են վերամշակող ընկերությունների միջոցով: «Կոոպերատիվներն այսօր ոչ միայն խորհրդատվական, այլև գործնական աջակցության կարիք ունեն: Արտադրության զարգացման համար ֆինանսական միջոցներ են պետք», - հավելում է Ա. Խաչատրյանը, ապա հույս հայտնում, որ կգա ժամանակը, երբ կոոպերատիվի նպատակներն իրականություն կդառնան:

Նելլի Սահակյան



ԾՐԱԳԻՐ

# ՆՊԱՏԱԿԸ՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՄԲԻՆ ԿԱՅՈՒՆ ԵԿԱՄՏՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՆ Է



**Ծրագիրը: Համայնքային փունջը ներառում է ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, Լանջանիստ և Շաղափ համայնքները, ծրագիրն ունի շահառուներ նաև Լուսաշող բնակավայրում:**



Հիմնադրամի գյուղական արտադրանքի մթերման ժամանակակից կետում հավաքվում, մշակվում և փաթեթավորվում են Ուրցաձոր համայնքային փնջում ընդգրկված տնային տնտեսությունների կողմից առաջարկվող արտադրանքը՝ խոտաբույսեր, միրգ և մեղր: Ծրագրի գործնական փուլին նախորդել են դասընթացները, որոնց ընթացքում տեղաբնակներին տրամադրվել են անհրաժեշտ գիտելիքներ՝ բիզնես նախագծերի մշակման և իրականացման համար: Համայնքային փնջի թիրախային խմբի ավելի քան 100 ներկայացուցիչներ ամբողջական պատկերացում են կազմել օրգանական գյուղատնտեսության, էկո և ագրո տուրիզմի մասին, ինչպես նաև ստացել են անգլերեն լեզվի և համակարգչային անհրաժեշտ գիտելիքներ:

Լուսաշող համայնքի բնակչուհի Հայկուշ Ստեփանյանը շուրջ 30 տարի է՝ զբաղվում է վայրի թեյաբույսերի և բանջարեղենի հավաքչությամբ: Այս օրերին մասնակցում է ուրցի հավաքի աշխատանքներին: «Սկզբնական շրջանում մասնակցեցի կազմակերպվող դասընթացներին, որոնց ընթացքում գիտելիքներ ձեռք բերեցի և ծանոթացա օրգանական գյուղատնտեսության, ինչպես նաև վայրի մշակաբույսերի հավաքման ժամկետների և մասնագիտական հմտություն պահանջող այլ հարցերի վերաբերյալ: «Կանաչ արահետ» ՀԿ-ի ուսումնական կենտրոնում ձեռք բերեցինք նաև գործնական գիտելիքներ՝ օրգանական մեղվաբուծության ուղղությամբ: «Հեյֆեր Հայաստան» միջազգային կազմակերպության դասընթացների ժամանակ հարստացրեցինք նաև ագրոէկոտուրիզմի վերաբերյալ մեր գիտելիքները: Արդեն ունենք աշխատանքային հետաքրքիր և մշտական զբաղվածություն», - պատմում է Հայկուշ Ստեփանյանը:

Սուսաննա Ավագյանը նույնպես ներկայացնում է Լուսաշող համայնքը: «Արդեն մեկ տարի է՝ ինչ մասնակցում եմ այս ծրագրին: Երկար տարիներ մեզ մոտ վայրի մշակաբույսերի հավաքը տարերային բնույթ էր կրում: Այս ծրագիրը հնարավորություն տվեց, որպեսզի այդ աշխատանքները լինեն ավելի կազմակերպված և արդյունավետ: Մասնակցելով վայրի բույսերի հավաքին, ներդաշնակություն է առաջանում մեր և բնության միջև: Հաճույքով և պատասխանատվությամբ եմ կատարում ինձ վստահված և հանձնարարված գործը», - նշում է Սուսաննա Ավագյանը:

Ռուզաննա Ղարիբյանը Ուրցաձոր համայնքի բնակչուհի է: Ծրագրի մուտք գործելուց անմիջապես հետո միացել է աշխատանքային խմբին: Ծրագրի մասին ճանաչողական գիտելիքներ ձեռք բերելուց հետո, անցել է ուսուցողական գիտելիքներին, որոնք ավելի են խորացել գործնական աշխատանքների ընթացքում: Ռուզաննան այժմ զբաղվում է վայրի բուսատեսակների հավաքչությամբ: Երիտասարդ գործարարը միաժամանակ վարում է հյուրատնային տնտեսություն, զբաղվում է նաև օրգանական գյուղվթերքների արտադրությամբ: «Վայրի հավաքչության աշխատանքներն արդյունավետ և որակով կատարելու համար, ծրագրի շրջանակներում, մեզ հատկացվել են անհրաժեշտ բոլոր պարագաները, այդ թվում՝ գյուղատնտեսական գործիքներ, բամբակե կտորից կարված, բնապահպանորեն մաքուր պարկեր, օձերի խայթոցներից պաշտպանվելու համար՝ ռետինե կոշիկներ, ինչպես նաև արևապաշտպան գլխարկ, ձեռնոց և այլն: Մեզ մնում է ակտիվորեն աշխատել և շարունակել համագործակցությունը», - եզրահանգում է Ռուզաննա Ղարիբյանը: Սահակ Սարգսյանը ներկայացնում է Լանջանիստ բնակավայրը, նա հաճույքով միացել է ծրագրի աշխատանքներին: «Սկզբում կինս՝ Հերիքնազ Սարգսյանը, սկսեց մասնակցել FPWC-ի հեղինակած «Կանաչ հանուն բնության» ծրագրի դասընթացներին՝ ձեռք բերելով նոր գիտելիքներ: Այնուհետև ուսուցողական դասընթացներ կազմակերպվեցին նաև օրգանական գյուղատնտեսության, ինչպես նաև՝ ագրոէկոտուրիզմի վերաբերյալ: Եվ քանի որ դասավանդվում էին հետաքրքիր և ուշագրավ թեմաներ, ես նույնպես հաճույքով սկսեցի մասնակցել: Ձեռք բերված հարուստ գիտելիքները հնարավորություն տվեցին

ճանաչել բնությունը, մեր բնաշխարհը, որը շատ բազմազան է: Մասնակցում եմ նաև վայրի հավաքչությանը, միաժամանակ վարում եմ անասնապահական փոքրիկ տնտեսություն, զբաղվում եմ նաև այգեգործությամբ: Առայժմ մրգերն իրացնում եմ տարերայնորեն, թեև ունեմ նաև մշտական գնորդներ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել չորամրգերի արտադրություն, որոշել եմ իմ արտադրած միրգը մթերել արտադրամասին, այդպիսով կազատվեմ նաև իրացման դժվարություններից», - սիրով իր խոհերն է կիսում Սահակ Սարգսյանը:

Վայրի բուսատեսակները, հերթագայելով միմյանց, հավաքվում են՝ ըստ սեզոնայնության: Աշնանը պետք է հավաքեն մասուր, տանձ, խնձոր և անտառային այլ մրգատեսակներ: «Ծրագիրը նպատակային և թիրախային է այն իմաստով, որ համայնքի բնակիչները ուղղակիորեն ստացած տեսական գիտելիքներն արդեն կիրառում են գործնականում: Ծրագիրն ունի հետևյալ հիմնական ուղղվածություններ՝ վայրի հավաք և բուսական թեյերի արտադրություն, մեղվաբուծություն և մեղրի արտադրություն, պտղի վերամշակում և չրերի արտադրություն:

Ծրագրով նախատեսվում է ունենալ նաև հյուրատնային ագրոբիզնեսի ոլորտի շահառուներ, ովքեր ևս իրենց գործունեությամբ կխթանեն համայնքային զար-



գացմանը: Համայնքային փնջում իրականացվող այս ծրագրին մասնակցությունը սոցիալական ձեռնարկատիրության լավագույն մոդել է, որը կարող է իր շարունակականությամբ ապահովել բնակիչների աշխատանքով զբաղվածությունը՝ խթանելով նրանց սոցիալ-կենցաղային խնդիրների լուծումը: Այդպիսով, կանխվում է նաև արտագաղթը, քանի որ մարդիկ ունեն մշտական զբաղվածություն և օրվա ապրուստ հայթայթելու միջոց», - նշում է ծրագրի խորհրդատու Նարինե Բաբայանը, ապա հավելում, որ վայրի հավաքի կազմակերպումն ունի նաև բնապահպանական միտում, քանի որ ծրագրի կարևորագույն առաքելություններից մեկն էլ՝ վայրի բնության պահպանումն է: Նախատեսվում է արտադրել թեյերի լայն տեսականի, ինչպես նաև ունենալ թեյախառնուրդներ, որոնք հաճելի կլինեն ոչ միայն տեղական սպառողների, այլև օտարերկրացիների քիմքին: Արտադրելու են հիմնականում ուրցի, դաղձի, եղինջի, մասուրի և վերջինիս ծաղկաթերթերի կապույտ տերեփուկի, այրճի և այլ վայրի բուսատեսակների թեյեր: Բույսերը չորացվում են քամիարման եղանակով, իսկ պտուղները նախատեսել են չորացնել էլեկտրական չորանոցներում: Արտադրամասը գտնվում է Վեդի քաղաքում: «Վայրի հավաք կազմակերպելու համար մասնակիցներին հատկացվել է քարտեզ, որտեղ նշված է, թե որտեղից կարելի է կատարել հավաքը: Տարածքում է գտնվում Խոսրովի արգելոցը, որտեղ խստիվ արգելված է բույսեր հավաքելը: Հիմնականում հավաքը շահառուները կատարում են հիմնադրամի (FPWC) պահպանության և վերահսկողության տակ գտնվող «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանի» տարածքներից (ներառում է 8000 հա տարածք):

Ծրագրի շահառուներին տրվել են նաև հրահանգներ ու ցուցումներ, որպեսզի որևէ վնաս չհասցվի բնությանը: Ծրագրի աշխատանքներին մասնակցում են ոչ միայն անհատներ, այլև ընտանիքներ», - տեղեկացնում է ծրագրի համակարգող Թագուհի Մանվելյանը:

Ծրագրի շրջանակում, տեղաբնակների կողմից ներկայացվող բիզնես ծրագրերի ֆինանսավորմամբ, նպատակ ունեն համայնքային փնջում երկարաժամկետ տնտեսական աճ գրանցել՝ խրախուսելով տնային տնտեսությունների ստեղծումն ու զարգացումը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է կազմակերպել երկու էկո-փառատոն, որոնք տեղացիների համար իրենց արտադրանքն ու ծառայությունները ներկայացնելու հարթակ կդառնան՝ խթանելով նաև զբոսաշրջության զարգացմանը: Արմենուհի Ներսիսյանը ՀՀ Արարատի մարզի Շաղափ գյուղի բնակչուհի է: Մասնագիտությամբ մանկավարժ է, գյուղի դպրոցում դասավանդում է պատմություն և հասարակագիտություն առարկաները: Արմենուհին հյուրատան գործունեության բիզնես-նախագիծ է ներկայացրել ծրագրին, որը դեռևս քննարկման փուլում է: «Ծանոթացա կազմակերպության ծրագրին և պարբերաբար մասնակցեցի դասընթացներին: Ինձ շատ դուր եկավ հյուրատնային բիզնեսի զարգացման գաղափարը, որը շատ մեծ հեռանկարայնություն ունի՝ հատկապես ագրո և էկոտուրիզմի զարգացման տեսանկյունից: Իսկ դրա համար մեզ մոտ առկա են բոլոր հնարավորությունները՝ բնապահպանորեն մաքուր և անարատ սննդամթերքի արտադրություն, պատմամշակութային հետաքրքրություն ներկայացնող արժեքներ, հիասքանչ բնություն, և, որ ամենակարևորն է՝ ջերմ ու սիրովոր վերաբերմունք», - նշում է Արմենուհի Ներսիսյանը:

Օրգանական հողագործության հիմնադրամը (FOF) գործում է 2016 թվականից: Հիմնադրամի նպատակը՝ գյուղական համայնքներում (ինքնուրույն) զբաղվածության հնարավորությունների ստեղծումն է՝ օրգանական գյուղատնտեսության, մեղվաբուծության, գյուղական համայնքներում ագրոտուրիզմի, էկոտուրիզմի զարգացմամբ: Հիմնադրամի ուշադրության կենտրոնում է նաև կենսաբազմազանության կայուն կառավարումը, բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և արդար առևտրի (Fairtrade) գաղափարը: Ծրագրական գյուղատնտեսություն, այգեգործություն, գյուղատնտեսական արտադրանքի մարքեթինգ, ագրոտուրիզմ, էկոտուրիզմ, հյուրատներ, անտառապահպանություն, վայրի բուսատեսակների կայուն հավաք, այս և մի շարք այլ ոլորտների ներդրման և զարգացման հեռանկարում՝ ավելի քան 5000 բնակչություն ունեցող համայնքային խմբին կայուն եկամտով ապահովվելն է:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) գործում է դեռևս 2002 թ.-ից: Հիմնադրամը (FPWC) Բնության պահպանության միջազգային միավորման (IUCN) անդամ է: Հայաստանի բնական բացառիկ ժառանգության և կենսաբազմազանության պահպանության, բնապահպանական խնդիրների և բնության պահպանության կարևորության մասին հանրային իրազեկումը հիմնադրամի առաքելությունն է: Նպատակը՝ մարդ-վայրի բնություն հավամարտության և դրա հետևանքների նվազեցմամբ, կենդանական և բուսական աշխարհի վտանգված տեսակների անհետացման ռիսկերը կրճատելն է: Կենսաբազմազանության պահպանումը, բնապահպանական կրթությունը, համայնքային զարգացումը և հանրային իրազեկումը FPWC-ի գործունեության առանցքում են:

Այդպիսով՝ տեղաբնակներն անմիջական կապ են տեսնում բնապահպանության և իրենց տնտեսական շահի միջև, որի արդյունքում ձգտում են փոխել իրենց սպառողական մոտեցումը վայրի բնության և շրջակա միջավայրի նկատմամբ՝ գիտակցելով, որ դա իրենց ընտանիքի մշտական եկամտի նախապայմանն է հանդիսանում:

Նելլի Սահակյան



## ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

## ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՏՈՀՄԱՅԻՆ ԳՈՐԾԸ՝ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

**Մինչև անասնազխաքանակի սեփականացումը (1990-1995-ական թվականները) տոհմային գործը հանրապետությունում սպասարկվում էր տոհմային գործի և արհեստական սերմնավորման կայանների կողմից: Դրանք գործում էին Արարաշարի շրջանի Մխչյան գյուղում, Սրբփանավանում, Ախուրյանում, Մարտունիում, Իջևանում և Սիսիանում:**

Գյուղատնտեսական կենդանիների տոհմային գործի և արհեստական սերմնավորման պետական կայաններից յուրաքանչյուրը սպասարկում էր մի քանի շրջանների, տնտեսությունների, նրանք պահում էին ցլեր, խոզեր և արհեստական եղանակով սերմնավորում կովերին ու մաքրիներին ինչպես թարմ, այնպես էլ խորը սառեցված /մինչև մինուտ 196 °C / սերմնահեղուկով: Միաժամանակ իրենց սպասարկման գոտու տնտեսություններում կատարում էին սելեկցիոն-տոհմային աշխատանքներ՝ կենդանիների բոնիտավորում, ընտրություն, տրամախաչումներ, ցուլերի տոհմային գնահատում՝ ըստ սերնդի որակի և լավագույնների նպատակային օգտագործում և այլն:



Հանրապետության համարյա բոլոր կոլեկտիվ և պետական տնտեսություններում կային նաև անասնաբույժներ /գոտտեխնիկներ/, ովքեր ընդհանուր անասնաբուժական – կազմակերպչական աշխատանքներից բացի, զբաղվում էին նաև սելեկցիոն-տոհմային աշխատանքներով: Այսինքն՝ հանրապետությունում գոյություն ուներ տոհմային գործը սպասարկող մի կուռ համակարգ:

Անասնազխաքանակի սեփականացման կոլեկտիվ և պետական տնտեսությունների լուծարման կապակցությամբ վերացան տոհմային գործը սպասարկող այդ կառույցները: Ներկայումս նախիրների, ցեղերի հետ, ըստ էության, սելեկցիոն-տոհմային աշխատանքներ չեն տարվում (բացառությամբ մի քանի ֆերմերների): Մինչդեռ կենդանիների որակը բարելավելու այլ միջոց չկա: Սելեկցիոն-տոհմային աշխատանքները նախիրների հետ պետք է մշտական լինեն:

Սելեկցիոն-տոհմային աշխատանքը՝ գիտական գործնական համալիր միջոցառումների մի ամբողջական համակարգ է՝ ուղղված գյուղատնտեսական կենդանիների գոյություն ունեցող ցեղերի պահպանմանն ու կատարելագործմանը, նոր ցեղերի, գծերի, նախիրների, ընտանիքների ստեղծմանը, մթերատվության բարձրացմանը ու տոհմային կատարելագործմանը, նախիրների և հոտերի վերարտադրության բարձրացմանը, տոհմային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը: Գյուղատնտեսական կենդանիները, լինելով արտադրության միջոցներ, պետք է անընդհատ կատարելագործվեն, վերափոխվեն և ստեղծվեն նորերը: Հետևապես՝ նրանց հետ պետք է տարվեն մշտական սելեկցիոն-տոհմային աշխատանքներ՝ այլապես բարձր մթերատու ցեղերը կարող են այլասերվել և վերանալ:

Սելեկցիոն-տոհմային աշխատանքները պետք է կատարվեն բոլոր տնտեսություններում, նախիրներում, ինչպես տոհմային, այնպես էլ ապրանքային, ինչպես փոքր, այնպես էլ մեծ գլխաքանակ և մթերատվություն ունեցող նախիրներում: Ելնելով ներկայումս ստեղծված իրավիճակներից, երբ անասնազխաքանակի սեփականացման հետևանքով, հանրապետությունում ստեղծվել են բազմափայլ (ավելի քան՝ 340 հազար) փոքր գյուղացիական, ֆերմերային տնտեսություններ՝ սելեկցիոն-տոհմային աշխատանքների սպասարկումը պետք է տարվի նոր մեթոդներով: Այդ գործում պետք է ընդօրինակել զարգացած տավարաբուծություն ունեցող երկրների (ԱՄՆ, Եվրոպական երկրներ) օրինակին: Այդ երկրներում փոքր ֆերմերային տնտեսություն-

ներում տոհմային գործը վարում են կամ իրենք՝ անասնատերերը, ֆերմերներն իրենց տնտեսություններում կամ մասնագիտացված կազմակերպությունների միջոցով: Տարբեր երկրներում այդ կազմակերպությունները կոչվում են տարբեր՝ ընկերություններ, կոոպերատիվներ, միություններ, միավորումներ, ասոցիացիաներ և այլն: Այդ կազմակերպությունների գլխավոր խնդիրն է՝ ֆերմերային տնտեսություններում կատարել անասնաբուժական հաշվառումներ, կովերի կաթի քանակի և որակի որոշում, կենդանիների ընտրություն, զույգընտրություն, ցուլերին՝ ըստ սերնդի գնահատում և այլն:

Տոհմային գործը սպասարկելու համար, այնտեղ մի խումբ ֆերմերներ կամովին միանում և հիմնում են մասնագիտացված կազմակերպություն, ընտրում նրա ղեկավարին, նրա հետ կնքում պայմանագիր, որտեղ ցույց են տրվում այդ կազմակերպության անելիքները և ֆերմերների պարտականությունները: Ելնելով կովերի գլխաքանակից և ֆերմերների ցանկությունից՝ երկրում կարող են լինել բազմաթիվ այդպիսի մասնագիտացված կազմակերպություններ:

Տոհմաբուծությունը սպասարկող յուրաքանչյուր կազմակերպություն վարձակալում է մասնագետներ (անասնաբույժ, անասնաբույժ, ագրոնոմ), դրանք կոչվում են հաշվառիչներ, ստուգող ասիստենտներ և այլն: Սովորաբար յուրաքանչյուր մասնագետ (հաշվառիչ) սպասարկում է 25 ֆերմերային տնտեսություն: Սահմանված գրաֆիկով նա ամսական մեկ օր լինում է մեկ ֆերմերի տնտեսությունում, մասնակցում կովերի կթերին, կշռում կաթը, որոշում նրա մեջ յուղի, սպիտակուցի պարունակությունը, գրանցում կովերի ծիրն, սերմնավորումը, ցամաքեցումը, մատղաշի ստոցումը, կատարում նոր ծնված հորթերի համարակալում, կշռումներ և այլն:

Այդ բոլոր տվյալները նա գրանցում է իր մոտ եղած մատյաններում և ֆերմերների տեղեկագրեքում: Ամեն անգամ ֆերմերի տնտեսություն գնալուց հաշվառիչը մշակում և ֆերմերին է ներկայացնում կենդանիների կերակրման կերաբաժինները (ռացիոններ) մեկ ամսվա համար, մինչև ֆերմերի տնտեսություն նորից հաճախելը:

Հաշվառիչը տոհմակայաններում ընտրում է բարձր որակի ցուլեր և ամրացնում ֆերմերի կովերին արհեստական սերմնավորման համար՝ թույլ չտալով ազգակցական զուգավորումներ: Նա մասնակցում է նաև ֆերմերի կողմից կենդանիների գնման և վաճառքի աշխատանքներին:

Տարվա վերջին հաշվառիչը (անասնաբույժ) ընդհանրացնում է ստացված տվյալները, որոշում կենդանիների տոհմա-մթերատու որակը (այսինքն՝ կատարում է բոնիտավորում), ընտրում բարձր մթերատու կենդանիներին՝ նախիր վերարտադրության համար, խտանում ցածր մթերատվություն ունեցողներին, կատարում կովերի ամրացումներ ցուլերին և նախատեսում սելեկցիոն այլ միջացառումներ:

Այդ բոլոր տվյալները հաշվառիչն ամփոփ ձևով, որոշակի անալիզով և եզրակացություններով ներկայացնում է ֆերմերին՝ գործնական աշխատանքում համապատասխան կարգով օգտագործելու համար: Կատարված աշխատանքների դիմաց ֆերմերը կատարողին (կազմակերպությանը կամ հաշվառիչին) վճարում է պայմանագրով նախատեսված գումարը: Սովորաբար վարձատրությունը կատարվում է սպասարկված մեկ կովի հաշվով, ամբողջ տարվա համար: Օրինակ՝ ԱՄՆ-ում ամեն մեկ կովի հաշվով, ֆերմերը կատարողին տարեկան վճարում է 5-7 դոլար:

Մի շարք երկրներում (Դանիա, Բելգիա, Շվեդիա և այլն) տոհմային սպասարկման դիմաց վարձատրությունը մասամբ կամ ամբողջովին կատարում է պետությունը՝ որպես օգնություն ֆերմերին:

Այսպիսով, որպեսզի հնարավոր լինի սելեկցիոն-տոհմային աշխատանքներ կատարել, մեր հանրապետությունում գյուղացիական-ֆերմերային հազարավոր փոքր տնտեսությունների առկայության պայմաններում, անհրաժեշտ է ունենալ սպասարկող մասնագիտացված կառույցներ (կազմակերպություններ, կոոպերատիվներ, ընկերություններ և այլն), որոնք գոյություն ունեն արտասահմանյան շատ երկրներում:

**Խաչատուր Միմոնյան,**

գյուղատնտեսական գիտությունների դոկտոր,

**Արմեն Միմոնյան,**

գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

## ԿՐԹԱԿԱՆ

## ՀԱԱՀ-ՈՒՄ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ



**Ոգևորված այն ամենով, ինչը կարևորվում է հայկական մշակույթում՝ հույս, ավանդույթներ, քրտնաջան աշխատանք և ընդանեկան արժեքներ, ես ուրախ եմ հայտարարել, որ Հայաստանում օրգանական գյուղատնտեսության զարգացման (BOAA) կրթական նախագիծը պարտադրաբար է հիանալի մեկնարկի: Նախագծի մշակման աշխատանքներին ես հաճույքով մասնակցել եմ Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) հիմնադրամի հետազոտական խմբի հետ՝ գործակցաբար: Այս նախագիծը նպատակ է հետպահում երիտասարդ մասնագետների կրթության և վերապատրաստման միջոցով վերացնել օրգանական գյուղմթերք արտադրող ֆերմերների առօրյա աշխատանքի և գիտության միջև խզումը:**

Քանի որ օրգանական գյուղատնտեսությունն ամբողջ աշխարհում հարաճուն զարգացող ոլորտ է, որը հիմնված է առողջության, էկոլոգիայի, արդարության և հոգատարության սկզբունքների վրա, այն գրավիչ է հատկապես նրանց համար, ովքեր նոր են ուղղ դնում աշխատաշուկա: Հայաստանում անցկացրած կարճ ժամանակամիջոցում ես նաև հասկացա, որ օրգանական գյուղատնտեսությունը համահունչ է ընդհանրապես հայերի մշակույթային ինքնությանը, քանի որ հայերը յուրահատուկ նվիրվածությամբ ու երկյուղածությամբ են վերաբերվում իրենց սնող հողին: Ելնելով այս ընկալումից՝ եռամյա BOAA նախագծի առաջին փուլում մենք կատարեցինք կարիքների գնահատում, որը ցույց տվեց, թե օրգանական ոլորտի կրթության, գիտելիքների և հմտությունների ինչ ահռելի պակաս գոյություն ունի Հայաստանում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում իրականացվելիք Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագիրը կնպաստի ոչ միայն ՀԱԱՀ-ի, այլև օրգանական մթերք արտադրողների ավելի լայն հանրության կարողականության զարգացմանը: Կարիքների գնահատման հիման վրա նախանշեցինք Ագրարային համալսարանում համապատասխան կրթական ծրագրի ներդրման կազմակերպական քայլերը և, անշուշտ, գործընկերային կապեր հաստատեցինք համագործակցության մեջ շահագրգիռ տարբեր շահակիցների հետ: Այս նպատակով Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) մեր գործընկերների հետ անցկացրեցինք 5 ֆուկուս խմբերի հետ քննարկումներ, այն է՝ ուսանողներ, դասախոսներ, օրգանական գյուղատնտեսության ոլորտի շահակիցներ, կին ֆերմերներ և բուն օրգանական գյուղմթերք արտադրող ֆերմերներ: Այս ֆուկուս խմբերը մեծապես օգնեցին մեզ հասկանալ թե՛ ՕԳ ոլորտի առկա կարիքները, և թե՛ նախագծի հետ կապված մարտահրավերները:

Ֆուկուս խմբային քաննարկումներից բացի, մենք հանդիպումներ ունեցանք ՀԱԱՀ ռեկտորի, պրոռեկտորի և մագիստրատուրայի բաժնի վարիչի հետ: Այդ հանդիպումները շատ արդյունավետ եղան այն առումով, որ մենք հասկացանք օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ներդրման՝ համալսարանի կոնկրետ պահանջները:

Ակնհայտ եզրակացություններից մեկն այն է, որ համալսարանում ներդրվելիք նոր ծրագրի հաջողության համար էական նշանակություն կունենան ՀԱԱՀ Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի մոդելի օգտագործումը: Ես լիազորվեցի, որ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած մերօրյա մարտահրավերների լավագույն լուծումներից մեկը կլինի օրգանական գյուղատնտեսության կրթական ծրագրի ներդրումը երկրի միակ գյուղատնտեսական բուհում:

**Միլենա Քիմեկ**

Վիեննայի բնական ռեսուրսների և կենսագիտության համալսարան



## ԲՈՒՅՍԵՌԻ ԱՇԽԱՐՀ

### ԾԻՐԱՆ՝ ԲԱՅԱՌԻԿ ՄԻՐԳ



**Ծիրանենու բացառիկության մասին գրել է նաև Խ. Աբովյանը: 1840 թ. Նոյ Նահապետի իջևանարեղի համարվող հայաբնակ Ակոռի գյուղը և այգիները գեղնին են հավասարվել ուժգին երկրաշարժի հետևանքով: Երեք տարի անց Աբովյանը ուղեկցում է եվրոպացի ճանապարհորդներին դեպի Արարատ լեռը: Արշավի մասնակիցներին մեծագույն զարմանք և հուզմունք է պատճառում այն հանգամանքը, որ գյուղի մոտակայքում պահպանվել էին 13 ծիրանենիներ, ինչն իրավամբ մեկնաբանվել է որպես երկնային նախախնամության նշան:**

**Նախորդ դարի 70-ականների սկզբում հարևան երկրներից մեկի գիթականները փորձել են ապացուցել, որ ծիրանը չի կարող համարվել հայկական ծագում ունեցող պտուղ: Առաջարկը, իհարկե, հերքվել է մասնագետների կողմից, սակայն առիթ է հանդիսացել լայնածավալ գիտափորձ կատարելու, որի համար պահանջվել է մոտ 16 տարի: Տարբեր բնօրրաններից վերցված ծիրանենու պահպանված տեսակները խաչաձևել են: Ծիրանենու հայկական տեսակները ճանաչվել են՝ որպես գենետիկորեն ավելի կատարյալ և հետևաբար՝ ավելի հին:**

#### ԾԻՐԱՆԵՆՈՒ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուժիչ հատկություններ ունեն ոչ միայն ծիրանենու ծաղիկը, պտուղը, սերմը, խեժը, այլ նաև՝ ծառի էներգետիկ դաշտը: Ազդեցությունը նման է կադուն կամ հաճարենուն: Խորհուրդ է տրվում մինչև ծիրանենուն մոտենալը պարպել օրվա ընթացքում կուտակված բացասական էներգիան կամ կաղամախու, նույն ինքը՝ դողդոջուն բարդու մոտ: Շնորհակալ ծիրանենին կհաղորդի ձեզ դրական էներգիա, կբազմապատկի ֆիզիկական և հոգևոր ուժերը: Ծիրանենու էներգետիկ դաշտը գերիշխող է և ուժեղ, իսկ ծառի նուրբ բուրմունքն ունի բարեբար ազդեցություն թոքերի և շնչուղիների վրա: Առաջին հայացքից թվում է, թե ծիրանի պտղի քիմիական բաղադրությունն ու օգտակար հատկությունները վաղուց ի վեր հայտնի են, սակայն ուսումնասիրությունները շարունակվում են և ի հայտ են գալիս նոր բացահայտումներ:

Ծիրանենու հայաստանյան տեսակներից առավել հարգի է «Երևանի (շալախ)» տեսակը, որի պտղի լուսավոր կողմն ունի վարդագույն երանգ. երբեմն մեկ պտղի վրա ի հայտ են գալիս (ըստ հերթականության) կարմիր-կապտա-

կանաչավուն-դեղնավուն երանգները: Երևանին պարունակում է մոտ 11,3 տոկոս շաքար, իմնականում՝ սախարոզա, և 0,63 տոկոս օրգանական թթուներ (կիտրոնի, գինու, սալիցիլի), 0,8 տոկոս նուրբ բջջանք, օսլա, ինուլին: Ծիրանի հայկական տեսակները հարուստ են հանքային աղերով, երևի թե կուտակում են մեր լեռնաշխարհի ողջ հարստությունը:

Հնագույն տեսակներից են՝ խոտրվենին և սաթենին, որոնց կորիզները նույնպես հեշտությամբ են անջատվում պտղից և քաղցրահամ են: Սաթենու պտուղն ավելի քաղցր է (14 տոկոս), բայց սակավ բուրավետ և հյութալի: Այս տեսակից պատրաստված չրի շաքարայնությունը հասնում է 40-50 տոկոսի:

Ծիրանի կալորիականությունը շատ փոքր է՝ 42 կիլոկալորիա 100 գրամում, չի գիրացնում: Բայց ծիրանի չրի կալորիականությունը 232 կիլոկալորիա է 100 գրամում:

Ծիրանը պարունակում է շաքար, ինուլին, կիտրոնաթթու, գինեթթու, խնձորաթթու, B խմբի, C, H, E, P, A վիտամիններ, երկաթ, կալիում, մագնեզիում, ֆոսֆոր: Ծիրանի պարբերական օգտագործումը կօգնի կանխել վահանագեղձի հիվանդությունները: Ծիրանի բաղադրիչ պեկտինը կօգնի տոքսինները և շլակները դուրս բերել օրգանիզմից: Ծիրանը հատկապես օգտակար է սրտանոթային համակարգի, երիկամների հիվանդությունների և ճարպակալման դեպքում:

Ծիրանն օգնում է բարելավվել հիշողությունը, բարձրացնում է ուղեղի ակտիվությունը: Ծիրանի կոմպոտը լուծողական ազդեցություն է ունենում օրգանիզմի վրա: Ծիրանն օգտակար է հիպովիտամինոզի դեպքում. վատ սննդի պատճառով վիտամինների պակասի դեպքում այն կարգավորում է մարսողությունը և նյութափոխանակությունը: Ծիրանը պարունակում է մեծ քանակությամբ կալիում, ինչն անփոխարինելի է սրտանոթային համակարգի նորմալ աշխատանքի համար: Ծիրանը պարունակում է երկաթ, ուստի հրաշալի համալրում է հղիների սննդակարգին, անեմիաների և տոքսիկոզի դեպքում:

Ծիրանը պարունակում է յոդ, որը լիովին պահպանվում է չրի մեջ. 75 մկգ՝ 100 գ հումքի մեջ, այս քանակը համապատասխանում է մարդու օրգանիզմի 1 օրվա պահանջարկի կեսին: Յոդը, ինչպես նաև կալիումը, պղինձը, կորալոր անհրաժեշտ են վահանագեղձի նորմալ կենսագործունեության համար: Շատ մասնագետներ գտնում են, որ սա մեր երիտասարդությունը պահպանող օրգանն է:

### ԱՐԵՎԱԾԱՂԻԿ

Արևածաղիկը բարդածաղկավորների ընտանիքին պատկանող միամյա, խաչածն փոշոպոկ խոտաբույս է: Նրան այլ կերպ անվանում են արևելած ծաղիկ կամ արևերթիկ: Հայտնի է մոտ 50 տեսակ: Միամյա արևածաղիկի հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Հնագիտական պեղումները հաստատում են, որ հնդկացիներն այս բույսը մշակել են դեռևս 2000 տարի առաջ: Կան հնագիտական վկայություններ, համաձայն որոնց, ներկայիս Արիզոնա և Նյու-Մեքսիկո նահանգների տարածքում եղել են արևածաղիկի մշակության վայրեր:



Սկզբական շրջանում բույսը մշակվել է որպես դեկորատիվ, երբեմն նաև բժշկության մեջ, ավելի ուշ՝ որպես բանջարանոցային բույս: Ենթադրվում է, որ Իսպանիայից արդեն անցել է Իտալիա, Ֆրանսիա, և արդեն 16-րդ դարում Բելգիա, Անգլիա, Հոլանդիա, Շվեյցարիա և Գերմանիա: Գերմանիայում 18-րդ դարում արևածաղիկն օգտագործվել է որպես սուրճի փոխարինող, բայց դա երկար չտևեց: Արևածաղիկից ձեթ ստանալու գաղափարը պատկանում է անգլիացիներին՝ 1716 թ., սակայն մասսայական արտադրություն առաջին անգամ կատարվել է Ռուսաստանում, Պետրոս 1-ինի օրոք, ով տեսնելով տարօրինակ ծաղիկը Հոլանդիայում, հրամայում է ուղարկել սերմերը Ռուսաստան: :

Ձեթի օգտագործումը կապված է Դմիտրի Բոկարեվի անվան հետ, ով զբաղվում էր կտավատի և կանեփի սերմերով ձեթի արտադրությամբ և նույնը փորձում է անել արևածաղիկի հետ: 1829 թ. առաջին անգամ նա ստացավ արևածաղիկի ձեթը ձեռքի խնոցով: Շատ չանցած բացվեցին առաջին արտադրամասերը, իսկ 19-րդ դարեվերջին Ռուսաստանը սկսեց արտահանել Միացյալ Նահանգներ և Կանադա: Ներկայումս արևածաղիկի և ձեթի արտադրությունը տարածված է ամբողջ աշխարհում: Հիմնական տարածաշրջաններն են՝ Արգենտինան, Ռումինիան, Թուրքիան, Իսպանիան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը:

ՀՀ-ում մշակվում է արևածաղիկի յուղատու, իմնականում Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում, անջրդի պայմաններում՝ որպես սիլոսային մշակաբույս: Ցանքի համար օգտագործվում էին խոշոր սերմեր, որոնց ծլունակությունը պետք է լիներ 96-100 %: Ցանքից առաջ սերմերը ախտահանել «վիտավաքս» կոչվող պատրաստուկի 2-3 կգ/տ չափաքանակով: Անհրաժեշտ է ցանել վաղ գարնանը՝ ապրիլի սկզբին, շարային եղանակով: Ցանքից հետո մոլախոտերի դեմ պայքարելու նպատակով, անհրաժեշտ է դրանք սրսկել հերթիցիդով: Արևածաղիկի բարձր բերք ստանալու համար առավել կարևոր է ոռոգման ճիշտ կազմակերպումը: Ոռոգումը պետք է կազմակերպվի՝ հաշվի առնելով բույսի կենսաբանական առանձնահատկությունները: Լինում է յուղատու, ուտելի և սիլոսային: Արևածաղիկը զգայուն է պարարտանյութերի նկատմամբ: Պարարտանյութերը զգալի չափով բարձրացնում են արևածաղիկի սերմնապտղի բերքը և յուղի տոկոսը: Արևածաղիկի ծիլերը լավ են դիմանում ուշ գարնանային սառնամանիքներին, այդ պատճառով էլ այն պետք է գարնանը ցանել վաղ ժամկետներում: Ուշ ցանքի դեպքում, թե սերմի, և թե սիլոսային զանգվածի բերքը խիստ ընկնում է: Ցանքը ուշացնելիս իջնում է նաև յուղի տոկոսը, վատանում դրա որակը:

Արևածաղիկով պատրաստված պատրաստուկներն ախորժակ են բացում, կրճատում են մարմնի ջերմաստիճանը, ունեն մկանները հանգստացնելու հատկանիշ: Ծաղկի տերևներից պատրաստված թուրմն օգտագործվում է մալարիայից պաշտպանելու համար: Բույսի տերևներից պատրաստում են թթոցներ, որոնք բուժում են ուռուցքներ, վերքեր, մոծակների և օձերի խայթոցներ: Իսկ բույսի արմատներն օգտագործվում են ռևմատիզմի բուժման նկատառումներով: Թուրմը բուժում է սրտի հիվանդությունները, դեղնախտը, գրիպը, բրոնխիտը, հարբուխը, տենդը: Թարմ սերմերն օգնում են պերդիաների և ցաների ժամանակ: Բարձրացնում է դիմադրողականությունը, կանխում լյարդի ճարպակալումը:

Լիլիթ Գասպարյան